պահանջէ, որչափ հաճոյակատարութիւնը, եթէ չատ քիչ ընես, տմարդութեան մէջ կ'իյնաս. եթէ չատ ընես, ծառայական կ'ըլլաս: Միջին ճամբան փափուկ և ազնիւ է: Սակայն հաճոյակատարութիւնն ալ կարի միջարդի առաքինութիւն մըն է: Մարդ լաւ սիրտ մը ունենալու է՝ ուրիշներուն հաճոյք պատճառելը սիրելու համար. չատ հանճարեղ ըլլալ պէտք է ուրիշներուն կամաց պատշաճութեամբ յարմարելու համար. մեծ համբերութիւն կ'ուզէ, ուրիշներուն բնաւորութիւններուն, թերութիւններուն եւ երբեմն նաև քմահաճոյից, առանց անոնցմէ պաղելու, համբերելու համար. մեծապէս հաստատամիտ ըլլալու է, երբէք չզիջանելու համար տալու կամ ընելու բան մը, զոր մարդուս պարտաւորութիւնը կ'արդելու: Ասոր համար է որ ճշմարտիւ հաճոյակատար մարդը հազուադէպ է. փոխանակ իր ճաշակը, իր գաղափարները ուրիշներու ճաշակին եւ գաղափարաց յարմարցնելու, այն ամէն բանի մէջ որ ներեալ է, կ'ուզէ իւրաքանչիւր ոք ընդհակառակն իշխել, կ'ուզէ որ ուրիշները իրեն յարմարին, կ'ուզէ վերջապէս ամէնուն նախադասուիլ:

Մեծերու հետ, խղճին ներած ամէն բանի մէջ, հաճոյակատար ըլլալը պարտք մըն է. մեր հաւասարներուն հետ բարեկրթութիւն է, մեզմէ ստորիններու հետ բարեսրտութիւն է, ամէնուն հետ անոնց բարեկամութիւնը սիրաշահելու եւ ինչ որ անոնցմէ ուզենք, ընդունելու ամենալաւ միջոցներէն մին է: Շօլնի դուքսը, Աղեքսանդր ութերորդի քահանայապետութեան ժամանակ, նախորդ Քահանայապետին Պաղղիոյ հետ ունեցած խընդիրը աւարտելու համար Հոռոմ զրկուած ըլլալով, փափաքեցաւ որ Բօլինեաք Աբբան, ապա Կարդինալ, այդ դեսպանութեան կերպով մը մասնակցի: Նոր Քահանայապետը, կատակելով գանգատեցաւ որ այդ երիտասարդ քահանան հրապուրիչ մըն էր: Երբէք ինծի չի հակառակիր, կ'ըսէր, միշտ իմ կարծիքս ունենալ կը քուի եւ չեմ գիտեր ի՛նչ պես, սովորաբար ինծի իւր կարծեաց հետեւիլ կու տայ: Ի գոհութիւն սրտի դեսպանին՝ խընդիրները յաջող վերջ մը ունեցան:

Գ

«Քաղցրաբարոյ ըլլաս»

Նկարագրի, այսինքն բնաւորութեան քաղցրութիւնը՝ բնութենէն տրուած ամենասիրելի յատկութիւններէն մին է: Եւ եթէ բնութիւնը զայն մեզի տուած չըլլայ, զայն ստանալու համար ամէն ճիգ ընելու ենք: Անհնարին չէ այդ, միայն բարի կամեցողութիւն և քաջութիւն պէտք է: Սուրբ Փրանկիսկոս Սալէզեան դիւրաբորբոք և բուռն բնաւորութեամբ մը ծնած էր: Հազիւ թէ իր թերութեան վրայ անդրադարձաւ, սկսաւ բոլոր ուժով զայն ուղղելու, և քաղցրութեան տիպար մը եղաւ, ինչպէս որ առիթի մը մէջ յայտնի ցուցուց: Երիտասարդ ազնուական մը, որ զինքը կ'ատէր, անոր պատուհաններուն տակ սարսափելի աղմուկներ հանեց և չատ մը շուներու հաչիւններուն քանի մը լիբր ծառաներու նախատինքներն ալ աւելցուց: Ասով չբաւականանալով, անձամբ սուրբ եպիսկոպոսին սենեակը ելլելու աներեսութիւնը ունեցաւ, և հոն, ինչ աւելի նախատալից և անարգական բան որ իւր կատաղութիւնը իրեն կը թելադրէր, ամէնն ալ դուրս ժայթքեց: Եպիսկոպոսը հանդարտ աչքով մը գիտեց այդ կատղած մարդը և անոր և ոչ բառ մը պատասխանեց: Այդ ազնուականը այս լռութիւնը իբրեւ արհամարհանք համարելով, ալ աւելի կատղեցաւ եւ իւր լրութիւնը մինչեւ յետին աստիճան նախատինքներ ընելու հասաւ: Երբ այդ կատղած մարդը վերջապէս մեկնեցաւ, հարցուցին սուրբ եպիսկոպոսին թէ ի՛նչպէս կրցած էր լռել այնչափ նախատանաց հանդէպ: Մենք, ըսաւ, այսինքն լեզուս եւ ես դաշինք մը դրինք, եւ համաձայնեցանք որ, երբ սիրս յուզուած ըլլայ, լեզուս բառ մը պիտի չարտաբերէ: Կրնայի՞ր աւելի լաւ դաս մը տալ այդ խեղճ զգեսին քե, ի՛նչպէս պիտի ինքզինքը զապել, երբ ոչ լռելովս. եւ իւր զայրոյթը կրնա՞ր աւելի շուտ հանդարտիլ, երբ ոչ իմ լուրսեամբս: Հարկ չէ՞ կիրքէն յուզուած քրուառականի մը վրայ գրալ:

Թարգմ. Ն. Ծ. Վ. ԱճԻՄԵՆԸ

(Շարունակելի)

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՏՕՆԱՅՈՅՑ

- Օգոստոս 3 † Կիր. զկ. Զ.— Զկնի Վարդավառի
- 4 Բշ. դմ. Եղիսեայ կուսին եւ իոր նորա Փիլիպպոսի եւ իմոր նորա Կղաւղեայ եւ երկուց եղբայրսն Սեդեայ եւ Ապիսոնի եւ երկուց ներքինեացն եւ Ս. վկայիցն Եղիսիոսի եւն. եւն.
- 5 Դշ. դկ. Սեդեասոսի Հոռմայ Հյւսս.ին եւ Կոստանդիանոսի քգր.ին եւ Մարութայի եպ.ին
- 6 Դշ. ամ. Պանոց
- 7 Եշ. ակ. Կուռնեիոսի հրիւրս.ին եւն.
- 8 Ուրբ. լմ. Պանոց
- 9 Շք. լկ. Եփեսոսի Ս. Ժողովոյն երկերիւ հայրապետացն:

Մ Ե Ծ Ն Ն Ե Ր Ս Է Ս

(Շար.)

Հայոց նախարարները Արշակ Թագաւորէն ապրատման, անոր շինել տուած Արշակաւան վատանուն քաղաքին համար, և անոր դէմ գրգռեցին Պարսից Շապուհ Թագաւորը: Նոյն միջոցին Յունաց Վադէս կայսրը լսելով Թէ Արշակ Հռոմայեցիները Թողլով Պարսից յարեր է, Թէոգոս զօրավարը շատ զօրքով Հայաստանի վրայ շարժեց:

Արշակ ամէն կողմէ նեղը մտած՝ նորէն դիմեց Ս. Ներսէսի, եպիսկոպոսները և մի քանի նախարարները միջնորդ բռնելով և խոստանալով ապաշխարել, միայն Թէ Հայրապետը խաղաղութեան հնարք մը գտնէ:

Սուրբը նոյն Թագաւորը հաշտեցուց գծաւալ նախարարաց հետ և ապա անձամբ գնաց Թէոգոսի աղաչեց որ երկրին քնաս չհասցնէ, խոստանալով ապա հարկ և մի քանի պատանդներ, որոնց հետ նաև Պապ արքայորդին: Թէոգոս ընդունեցաւ սուրբին առաջարկը, բայց խնդրեց որ Սուրբն ալ իրեն հետ կայսեր մօտ երթալ:

Վաղէս որ ժանաբարոյ արիստեան մըն էր, Ս. Ներսէսի գալուստը լսելուն պէս, գիտնալով անոր հաստատման ուղղափառութիւնը, իսկոյն աքսորեւ տուաւ զայն իր երկու ասրկաւազներով:

Եղանակը ձմեռ ըլլալով, նաևով աքսորավարը երթալու ոտեն, սաստիկ փոթորիկ մը ելաւ և նաւը անձնակ կղզի մը ձգեց: Հոն ութը, ինը ամիսի չափ կեցան, և երբ Վաղէս չարաչար մահաւամբ մեռաւ և Թէոգոս բարեպաշտ կայսրը Թագաւորեց, Ս. Ներսէս ուրիշ շատ մը սուրբ հոյրերու հետ աքսորքէ դարձաւ: Եւ ներկայ գտնուեցաւ Կոստանդնուպոլսոյ Ժողովին որ նոյն օրերը գումարուեցաւ հոգեմարտ:

Մակեդոնի և նոյն ժամանակուան ուրիշ հերձուածողներուն դէմ:

Երբ Ս. Ներսէս կը պատրաստուէր իր աթոռը դառնալու, լսեց Արշակի չարաչար մահը և Հայաստանի՝ Պարսից կողմէն աւերուելը: Ուստի Թէոգոս Մեծին ապաչեց որ Կոստանդնուպոլսոյ գտնուող Պապ արքայորդին Թագաւոր տնուանէ և Յունաց զօրքով Հայաստան շրջէ: Պարսիկները այն տեղէն վատրելու համար, Թէոգոս կայսրը կատարեց Սուրբին խնդրքը:

Պարսից Թագաւորը այս բանս լսելով Հայաստան շրջեց բազմաթիւ զօրքեր, որոնք եկան բռնակեցան Զիրաւ դաշտին մէջ, Նպատ լեռան մօտ: Մեծն Ներսէս օրհնեց և քաջալերեց Հայոց և Յունաց զօրավարները և զինուորները, որոնք առիւծաբար յարձակեցան Թշնամեաց վրայ: Մէկ մասը ջարդեցին, մնացածները փախստեան մատնեցին: Պատերազմին ժամանակ Մեծն Ներսէս, Մովսէս մարգարէին պէս, բազկատարած անդադար աղօթեց քրիստոնեայ զինուորներու յաղթութեան համար:

Խաղաղութեան հաստատուելէն վերջը, Սուրբը յորգորեց Թագաւորն ու իշխանները որ բարեպաշտութեամբ և սիրով ապրին: Բայց Պապ մանկահասակ և խակամիտ ըլլալով, ամօթալի ընթացք մը բռնեց և ամէնուն զգուշի և գանձի եղաւ: Ասոր համար Սուրբը սաստիկ յանդիմանեց զինքը, բայց Պապ փոխանակ դարձի գալու նենգութեամբ կանչեց Սուրբը խախ գիւղը և գինիին մէջ մահադեղ խառնելով զինքը Թնուանորեց:

(Շարունակելի)

ՀՈԳԵՒՈՐ ՄՏՏՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԳՐԲԷՆ

Գիրք Ա.—Գլ. ԺԲ.— Նեղութեան օգնակարութեան վրայ:


Ուստի մարդս պէտք է աշնպէս հաստատուի յ'Ասուած, որ հարկաւորութիւն չունենայ փնտռելու մարդկային շատ միջոցաւորութիւններ:

Երբ բարի կամք ունեցող մարդը կը նեղուի կամ փորձութիւններ կ'ունենայ, կամ շատ խորհուրդներով կը օանջուի, ա'ն ասեմ կը հասկնայ որ Ասուած իրեն շատ հարկաւոր է, եւ քի առանց անոր քննալ բարի բան մը չի կրնար ընել:

Նոյնպէս ա'ն ասեմ կը յիշի, կը հեծէ եւ իր քրտմ խեղճութիւններուն համար կ'աղօթէ:

Ան ասեմ ձանձուրութիւն կը զգայ աւելի երկար ապրելի, եւ կը փափագի որ գայ հասնի մահը, որպէս զի ելլէ մարմնէն ու Բրիստոսի հետ ըլլայ:

Նոյնպէս ա'ն ասեմ չու կ'ըմբռնէ որ կասարեայ ապանդութիւն եւ շիռլի խաղաղութիւն այս աշխարհիս վրայ չի գտնուիր:



Այսպէս Յոն Թուփիլ շատ տարիներէ ի վեր Հալլի համալսարանին մէջ ժամանակակից պատմութիւնը կ'ուսուցանէ: Հայակապ երկասիրութիւններ ունի սնդղիացի Բիթ Նախարարին վրայ, ինչպէս նաեւ նկատմամբ Գերմանական կայսրութեան կազմակերպման՝ Աւստրիոյ և Ֆրանսոյի դէմ մղուած պատերազմներէն վերջը: Ինք շատ նշանաւոր ուսուցիչ մըն է: Շատ ջերմասէր բողոքական մըն էր:

Գանի մը տարի է որ Յոն Թուփիլ ուսուցիչը կաթողիկէ եղեր է: Այս դարձը Գերմանիոյ մէջ մեծ յուզում յառաջ բերաւ, մանաւանդ որ Յոն Թուփիլ երկասիրութիւն մըն ալ հրապարակ հանեց իր դարձին մասին:

Շահեկան է կարծենք այս գրքին վրայ մանրամասն տեղեկութիւն մը ապա մեր շնորհըներուն:

Գրքի մը բանալին՝ իր յառաջաբանն է: Յոն Թուփիլ յառաջաբանը կարճ է, հիւթեղ և շահադրդողական: Ահաւտակ:

«Կաթողիկէ եկեղեցւոյ ծոցը մանկէս անշուշտ յառաջ բերաւ մեծ զարմացում և առիթ տուաւ շատ մը աննպաստ գատողութեանց: Միշտ այսպէս կ'ըլլայ երբ իրողութիւն մը, արդիւնք թաքուն բարեքրութիւն, յանկարծ երևան կու գայ: Իմ դարձիմ մասին եղած գատողութիւններուն նկատմամբ չեմ կրնար անտարրեր մնալ: Ինծի սլարտք կը համարիմ յայտնել թէ այս բանս ինչպէս տեղի ունեցեր է. թէ և հաճելի չէ հրապարակել ներքին «փորձառութիւնները», և իր անձին վրայ այնքան խօսիլ: Սակայն այս մասին անհրաժեշտ կարեւորով շատացեր եմ, և աւելի օգտակար համարեր եմ ծանոթանալ դարձովս ստացած «ծանօթութիւններուն» վրայ: Այս գիրքը սոստուածաբանական երկասիրութիւն մը կամ կաթողիկէ վարդապետութեան բովանդակութիւն մը չէ՞: Պատմութիւնը ուսումնասիրած ըլլալովս՝ այս նիւթերուն մէջ ձեռնհասութիւն չունիմ: Ուզած եմ լոկ անցողակի ուրուագծել կաթողիկէ եկեղեցին

ա'յնպէս ինչպէս ինծի կը ներկայացնեն դանդաղացումներս, նկատողութիւններս, և ուսումնասիրութիւններս: Գիտեմ որ ուժգին յարձակումներ պիտի կրեմ, բայց անոնք պիտի պիտի չկասեցնեն: Եւ կարծեմ թէ ոչ ոք կրնայ զլանալ ինծի այս բարձր նիւթին վրայ գիտակցաբար խօսելու ձեռնհասութիւնը:

Այս գիրքը ունի վեց գլուխ: 1. Սուբեկեղեցւոյ ծոցը դառնալս: 2. Կաթողիկէ եկեղեցւոյ հիմը: 3. Ս. Հաղորդութիւնը: Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ: 4. Սէրը: Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ: 5. Ազատութիւնը: Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ: 6. Թշնամութիւնը: Կաթողիկէ եկեղեցւոյ դէմ:

Ստալին գլուխը ամէնէն շահագրգռականն է: Յոն Թուփիլ հոն կը պատմէ իր դարձը: «Պահպանողական բողոքականութեան մէջ դաստիարակուած ըլլալով՝ անցայ այն ամէն վիճակներէն, որոնցմէ հառաբակօրէն կ'անցնէին սնկախութեան ձգտող երիտասարդ իմացականութիւններ: Նախ տարակոյս, յետոյ՝ նիւթադաշտակուն, համառուածեան, արդիական յղացումներ, և այս ամէնը՝ խառն ի խառն: Միտքս մթաղնած էր, բայց կը քաշէի տեսակ մը հաւատք և կը գործադրէի կրօնական յարածքերս»:

Նոյն միջոցին՝ Յոն Թուփիլ կը ճանչնար Կաթողիկէութիւնը միայն իր յոճախած բողոքական սնծիքէն լատ՝ սոստուգիւններէն և զրգարառութիւններէն և... Աստուածային թոտերտաղէն զոր յարտուեալ ետքիցով կը կարգար: 1901ին, աղտոտմիտ բողոքականներու լքման որ երկերը կարգադու անվորութեանը համակցա, սկսաւ քննել Ա. Հառնաքի Բրիտանիայի Կոնգրէսին մասին նշանաւոր բանախօսութիւնները, ուր պատմական քրիստոնէութեան և ուրիշ իսկ յուսկուն բողոքականութեան գրեթէ ստիպող չէնքը հիմն ի վեր տապալեր է ան: Տարօրինակ բան, այս գրքին ընթերցումը Յոն Թուփիլ վրայ անախտալ արգիւնք մը յառաջ բերաւ: Գիրքը հոգեկալիկ նորէն յարեալ պահպանողական բողոքականութեան: Այնուհետեւ աւելի ջերմասէր կրօնական կեանք մը սկսաւ, տաճարին մէջ տեղի ունեցող աստ-

ուածային պաշտօնականներն կանոնաւորապէս ներկայ կը գտնուէր, կ'ուղեւորէր ասիւքան բարեպաշտօրէն հովուին քարոզչերուն որ իր կրօնակիցները զինքը ծնողայեղ կը կոչէին: Այս բանս իրեն շատ դարմանք կը պատճառէր: Ստար երկիր ըրած ուղեւորութեան ընթացքին սկսաւ նշմարել որ կաթողիկէ եկեղեցիները բողոքականոց տաճարներէն աւելի յաճախ և աւելի քրկոր ժամանակ քաց են. և կաթողիկէ ծէսը, հասարակութեամբ հղած աղօթքները շատ սրտայայտ են և նստատաւոր՝ կրօնական զգայման առաւելութեան: Բողոքականութեան մէջ դատարկ մը չգտայ, և այս զգացումը աւելի եւս ուժգին հանգամանք մը առաւ երբ դառն աղէտներ, ի մէջ այլոց իր զաւակներուն մօտը հարուածեցին զինք:

Ամենէն նշանաւոր հովիւներու հետ ըրած խօսակցութիւնները չկրցան անհետ ընել այն խոսքութիւնը, այն տախտակ անհանգստութիւնը, այն տենչն ու ձգտումը գէպի լաւագոյն կրօն մը: Իայց ընաւ միտքէն չէր անցնէր ընդգրկել կաթողիկէ կրօնքը, «որ կը պատուիրէր պաշտօնունքը Ս. Կուսին և Սուրբերուն»: Ինք, ուսուցիչ համալսարանի, այդ միջոցին տեղեակ չէր կաթողիկէ վարդապետութեան: Բայց սկսած էր գարմանքով նկատել կաթողիկէութեան նուիրապետական հզօր յօրինուածքը, ծէսը, և այն կրօնական զգացումները զորս կ'ազդէր, կը տածէր և կը տարածէր:

Տեսաւ տակաւ տկար կողմը այն յարձակումներուն, զորս հովիւները իրենց քարոզչներուն մէջ, կ'ուղղէին Քահանայապետին չափէն աւելի շքեղ արարողութեանց գէմ. «որովհետեւ երախտոյրին տակ կրնար գտնուիլ փչէ պսակ մը»: Այս միջոցին իր ըրած կրօնական հետազօտութիւնները համոզեցին զինք թէ բողոքական անկախ Վարդապետ մը անհրաժեշտ կարեւոր է. այս կերպով զինքը կաթողիկէութեան մօտեցնողը եղաւ յաւէտ բողոքական եկեղեցիներու մէջ տիրող վարդապետական խառնափնդորութիւնը:

«Կաթողիկէ էի ես, որչափ որ կրնայ ըլլալ կաթողիկէ եկեղեցւոյ հետ ընաւ յարա-

բերութիւն չունեցոր մը»: Ահա այսպէս կ'ուրակէ Փոն Ռուվիլ իր նոյն ատենուան վիճակը: Տարօրինակ բան, մտքէն չէր անցնէր՝ աւելի ճիշդ և որոշ տեղեկութիւններ ստանալ կաթողիկէ ճշմարիտ վարդապետութեան մասին պաշտօնապէս ընդունուած հեղինակներու զրքերէն: Դիպումով միայն առիթ ունեցաւ հմտանալ կաթողիկէ վարդապետութեան բովանդակութեան, զոր յօրինած էր Վիկտուարի կաթողիկէ ուսուցիչ մը, Ռէյնհոլտ: Այս գիրքը գնեց, կարդաց և ուշադիր քննութեանէ մը ետեւ, տեսաւ թէ «մանուկ հասակէն կաթողիկէութեան մասին բողոքական սոսա բաներ սորվեցուցած են ինքն»: Բայց դարձաւ կարելի չէր համարել իր դարձը: Ս. Հաղորդութիւնը, իրական ներկայութիւնը և գոյացափոխութիւնը զինքը կը կասեցնէին: Սակայն սկսաւ այս մասին հարցումներ ընել կաթողիկէից իսկ. և ամէնքը պատասխանեցին իրեն շատ սիրալիկ կերպով, բայց միանգամայն մեծ և անակնկալ վերապահութեամբ: Այն կաթողիկէները որոնց հետ կը տեսնուէր զինքը չէին մղեր կաթողիկէութեան դառնալու, Դարձեալ սկսաւ ուսումնասիրութեան: Հէֆերէի ժողովին պատմութեան ընթերցումը զինքը աւելի մօտեցուց կաթողիկէութեան: Մոլէրի մէկ երկատիրութիւնը վերջ տուաւ Ս. Հաղորդութեան վարդապետութեան նկատմամբ ունեցած տարակոյժներուն: Այս կէտին հասնելուն պէս, խոստովան ուսուցիչը առաւ քրիստոնէական մը և անոր մէջ բովանդակուած վարդապետութիւնը կէտ առ կէտ քննեց: Ամէնը կ'ընդունէր: Հոն կարդաց նաեւ սա նախադասութիւնը որ իրեն կը վերաբերէր. «Երիտօրի հաւատքէն և փրկութենէ դուրս կը գտնուի այն, որ կը ճանչնայ կաթողիկէ եկեղեցին, համոզուած է անոր հեղինակութեան մասին, բայց յանձն չ'առնուր անոր մէջ մտնել»:

Դարձը որոշուած էր: Դնաց կաթողիկէ քահանային քով, լրացուց իր ուսումը և, քիչ մը վերջը, ընդունուեցաւ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ: Անմիջապէս առաջին Հաղորդութիւնը առաւ. և «խորհուրդը իր առջեւը պարզուեցաւ»:

ՂԱՅԻՊ ՕԼՍՈՒՇ ՄԷՍԵՐՐԵՅԼԵՐ

Բէտէր, վալիտէ վէ չօճուգ, հէր իւչիւտէ օճաղըն գարչըսընտա տիւղ իւսթիւնէ կէլմիշ, Յիսուս Մանուկըն կէչէճէյի կիճէ՝ աշագլարընա կիյինէպիւմէսի իչիւնս պիր չիվթ կիւղէլ չիզմէ հէրլէշտիրիօրլարտը: Իչլէրինի պիթիրտիքտէն սօնրա վալիտէ, նաղըն էվլաաղընը հաթըրմաղա կէօթիւրտիւ: Բէտէր տէ մուխապէրաթընը իքմալ իթմէք իւզընէ մասապիւնըն պաշընա ալտէթ իթտի:

Տէհչէթլի պիր մուխապէրէսի վար իտի. մանթըգասընըն հէր թարաֆընտան միւնթէխիպլէր քէնտիսինէ մէքթուպլար հաղարլար, եա հիւմայէ վէ մուալէնէթիւնի բէճա իտէրլէր վէ եախօտ իսթիթաֆաա պուլընըրլար իտի: Պուլլարըն քեաֆֆէսինէ սէ ճէվապ վէրմէլի... Սիյասէթ ինասըն կէչինտիւմէղ իտտիասընտա պուլընանլար վար իսէ տէ, պու ատամ իչիւն սիյասէթ բէք լութֆեհար պիր տիտար արզ էյլէմիշտի: Բէյ տէր բէյ պէլէտիյէ աղաուր, բէյիս վէքիլի վէ մէպուս օլապիլմիշ վէ էվլէլլէրի աշաա սօգուզ եիւզ վէ տահա սօնրալարը պին սէշ եիւզ ֆրանք մաաշ ալարազ, թալիին գատէմէսինի պիր միւսասատէյի պի նազիրէ իլէ իրթիգա էթմիշ իտի:

Սահիհ տիր քի պու տէրէճէյի պուլապիլմէք իչիւն «իթիգատաթըն տինիյէսինտէն» վաղ կէչմիշ, մէզնէպիւնին իյճապընտան օլան վէզայիֆի թէրք իթմիշ վէ հաթթա... ֆըրանմասօն լօթընա պիլէ գայա օլընմըշտը: Պիր վազըթ, զէքեսսընը, ֆաալիյէթլինի վէ ֆիլիսանըն միւտտֆիի միւսթազպէլի օլտպիւլէճէյինի կէօրէն Յիսուսեան վարդապետլէրին թազիմլէ սէլաւալարընը պու զաթ՝ պու կիւն մէճլիսի մէպուսանտա, սօլտա, բուհալանա գարչը պիր հարպըր տայիմի իլան իթմիշ օլանլարըն էօն սաֆֆընտա, ճէմիյէթլին իիւթիլալընը իլթիղամ իտէնլէրին արաաընտա ախզը մէվգի էյլէմիշտի:

Շան ու չէրէֆի, իզպալբէրէսթիյի, օշըն իզտիրապըր վիճասընըն թաթմիյն իտէմէտիյի կիպի, միւվէֆֆազիյէթլէրի սէ քէն-

տիսինէ պիր գալպ բահաթլըղը պախշ իտէմէյօրլարտը: Պու սէպէպէ մէպնի տիր քի, քէնտիսինին խըյանէթլէրինէ պիր մուգապէլէ օլմագ իւզընէ, հիշ օլմագսա, էվլաաղընը քրիսթիյան հիսսիյաթլաընլա պէօյիւմէսինի արզու իտէրտի: Պիր թարաֆտան չօճուղընը հիւքիւմէթ մէքթէպիւնէ գօմամաղա գարարը գաթի վէրմիշտի, չիւնքի օրանըն թէրպիյէսինտէն իքրահ իտիյօրտը, օ պիր թարաֆտան, ծըր պիր գաթօլիք մէքթէպիւնէ գօմայա ճէսարէթ իտէմէյօրտը, չիւնքի միւնթէխիպլէր պու հալինտէն մէմուսն օլմայաճագլարտը, պինաէն ալէյի, հէմ քէնտի բէտէրլիք վազիֆէսինի վէ հէմ տէ խալըն մէմուսն էտէպիլմէք իչիւն պիր չարէ տիւչիւնմիւշ, վէ չօճուղընը թալիմ ու թէրպիյէսինի թէմին իթմէք իչիւն էմիյէթլի վէ էյի ֆիքիւրլի պիր մուալլիմէ պուլմուշ վէ էվինէ ալմը իտի:

Պու սուրէթլէ, տահա անճագ սէքիլ եաշընտա պուլընան Ժօզէֆ, սաղըսըղ նազարլարտան ուզագ օլան քէնտի խանէսինտէ քէմալը սէրպէսթի իլէ քրիստոնէական վարդապետութիւնընը էօյրէնէպիլլիրտի, հաթթա գարուլարըն էյիճէ վարալը օլտըղընա գանի օլտուղը վազըթլարտա բէտէրի տէ ծըն տէրսինի տինլէրտի:

* *

Օ կիճէ արթըզ բէք ուզուսն իտի. Ժօզէֆ իքի տէ պիր եէնի հէնի բիւյալար կէօրէրէք ույանրյօր վէ սօնրա եինէ քէսիք պիր ույպույա տալլյօրտը: Նիհայէթ սապահլան բէք էրքէն ույանտը: Տաթէն պու սըրաուա բէտէր վէ վալիտէսի տէ քէնտիսինի ույանտըրմագ իչիւն օտաուընա կէլիյօրլարտը: Պու սապահ Ժօզէֆի ույանտըրմագ իչիւն պէր միւթտա ծընը գօլընտան չէքմէյէ, էլպիսէսինի կիյինմէք վազթը կէլմիշ օլտուղընը իիւթար իթմէյէ մէյտան գալմատը: Պիր գաշ տագիգա սօնրա հէր իւչիւ պիր արատա էվլէլքի ազշամըն մէնղարէսինի թէճտիտ իտիյօր վէ օճաղըն գարչըսընտա տիւղ իւզէրինտէ պուլընըյօրլարտը:

Ճաւաշճա բէրաէ գալտըրըլար, Ժօզէֆ

հետիյէլէրէլ տօլու օլան չիզմէլէրի կէօրտիւ-
յիւնտէ մէսէրրէթինտէն պաղըրմաղա պաշ-
լատը... Յիսուս Մանուկ օրաստան կէչիւշտի
Պիւթիւն հէտիյէլէր չիզմէլէրին իչինէ սըղա-
մատըղընտան, միւրսէլի սէմափի պիր թա-
զըմ բաքէթլէրի տէ քիւլիւն իւզէրինէ պը-
րազմըշտը:

Բէտէր օնլարը պիրէր պիրէր գալտըրըյօր
վէ վալիտէ տախի մասանըն իւզէրինէ տի-
ղիյօրտը: Բաքէթլէր պըրմըղը վէ եա մափի
չէրիսլէրլէ պաղըր իտի քի մութլազա մէ-
լէքէրին բարմաղլարըյա էօրիւլմիւշ իտի-
լէր... Ժօզէֆ մէմուսն, մէսրուր պուշլարը
սէյր իտիյօրտը վէ քէնտի քէնտինէ տէյօրտը.
«հէր հալտէ պու հէտիյէլէրի կէթիւրէն մէլէք
պիր թարաֆա կիզլէնմիւշ պէնի թէմաշա ի-
սիյօր օլմալը տըր», վէ պու ֆիքրէ մէպնի
պաշընը բէրտէնին ալթընա սօպարազ, օճա-
ղըն գարարմըշ տէլիյինին քէօշէլէրինտէ ա-
ճէպա սաղըր պիր քիմսէ վա՞ր մը տըր տէյէ
պազըյօրտը:

(Մապասի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ռ Ո Ս Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Ը

Յուլիս 20ին Լեւոն ԺԳ.ի մահուան տաճկերորդ
տարեգարկին առթիւ, հաւատացեալները բազմու-
թեամբ այցելեցին սնոր քերեղմանը և հոն աղօթե-
ցին:

Նոյն օրը, Պիոս Ժ. ընդունեցաւ Սուրբ-Գամատոսի
պալատին մէջ Սուրբ-Յովսէփ նորահաստատ թեմին
ժողովուրդն ու ընկերութիւնները: Ներկայ էին նաև
ուլիշ բազմութիւն տնօրէն Ն. Սրբութիւնը ոչ միայն
օրհնեց հաւատացեալները, ինչպէս նախորդ ընդունե-
լութեանց մէջ, այլ նաև ուղղեց անոնց մի քանի յոր-
դորական խօսքեր, զորս, այն ընդարձակ տեղւոյն մէջ,
ամէնքը որոշ որոշ լսեցին:

Յուլիս 15ին Գանգալի մէջ վախճանեցաւ
Գամարէի Արքեպիսկոպոս Տըլամէս Գերապայծառը:
Հանգուցեալը շատ գործունեայ և արդիւնաւոր կեանք
մը ունեցեր է: Ծնած է Բարիզի մէջ 1818 Փետրուար
1ին: Փայլուն յաջողութեամբ իր ուսման շրջանը լնցը-
նելէ յետոյ քահանայ ձեռնադրուեցաւ և եղաւ Ժո-
ղովրդապետ Իսապուր Տիւրքուր, ուր մեծ զարկ
տուաւ կաթողիկէ ընկերութիւններուն: 1904 Ապրիլ

15ին Լեւոն ԺԳ.ի հրամանաւ բարձրացաւ Բէրիկէօյի
աթոռը: 1906 Սեպտեմբեր 3ին Պիոս Ժ. անուանեց
զինքը օգնական Գամարէի Արքեպիսկոպոս Սոնուս
Գերապայծառին: Իր անխնայ ու յորդ գործունէու-
թեան շնորհիւ թեմին գործերը հիանալի զարգացման
շրջանի մը մէջ մտան:

Իր հովուական թուղթերէն շատերը, յատկապէս
մամուլին վրայ, դարոցական դատաբարբու և ամուս-
նալուծման դէմ գրածները՝ մեծ ազդորդ արձագանգ
գտան ամէն կողմ:

1903ին, անգի հեր պայքարեցաւ կրօնական միա-
բանութեանց համար. մասնաւորապէս՝ Կերափոխման
կարգին համար:

Գամարէի ամբողջ կաթողիկէ ընկերութիւններուն,
ակումբներուն սիրտն էր, կեդրոնն էր:

Արհի. Սոնուսի վախճանելէն յետոյ սնոր տեղը
անցաւ Տըլամէս Գերապայծառը. բայց աւա՛ղ, իր
թեմականները չկցան երկար տան վալիշ իր սղ-
մարդին ձիրքերը. մահը զրկեց զիրենք փութով այս
եռանդուն առաքելէն:

Ս. Հաղորդութեան առաջիկայ Միջազգա-
յին Համաժողովը տեղի պիտի ունենայ Լուրտի մէջ,
1911 Սեպտեմբեր 9, 10, 11, 12 և 13ին:

Վատիկանի Զուխցերացի գունդին մէջ ծա-
գեցաւ ըմբոստութիւն մը, որուն մասին սապէս կը
գրէ Օստրվաթտ Բօւանիօ թերթը Յուլիս 20 թիւով:
«Այս օրերս Զուխցերացի գունդին մէջ տեղի ու-
նեցաւ արգարեւ ողբալի եղելութիւն մը, բայց ոչ
այնչափ ծանր, որչափ ցոյց տալ կ'ուզուի»:

Յուլիս 17ին այդ գունդէն քսան և մէկ հոգի կը
յայտարարեն թէ՝ Չենք երթար մեր պաշտօնավայրը
մինչեւ որ մեզի գոհացում չտրուի՝ Կլէսօն հարեւրա-
պետին հեռացումով: Այս պաշտօնեան որ ներկայ էր,
այդ անակնկալ ստահակութիւնէն յանկարծակիի եկած՝
կացութեան փափկութիւնը չըմբռնեց և սկսաւ ըմ-
բոսաներուն հետ վիճել, փոխանակ երթալու խնդիրը
իր մեծին, հաղարապետ Կլանցմանի յայտնելու: Աղ-
մկոտ բանակուիւ մըն է փրթաւ, որուն վերջ տրուե-
ցաւ բարապանի մը միջամտութեամբը:

Գնդապետ Ուրբոն, որ Զուխցերիա արձակուրդի
մէջ կը գտնուէր, կանչուեցաւ անմիջապէս և Կլէսօն
հարեւրապետին առժամեայ արձակուրդ տրուեցաւ:
Ուրբոն գնդապետը այս առտու հոս հասաւ և հար-
ցաքննութեան սկսաւ, որմէ տեսնուեցաւ թէ Կլէսօն
հարեւրապետը անձեռն հաս է իր պաշտօնը շարունա-
կելու. ուստի և պետք է զինքը հրաժարելու հրա-
ւերել...»:

Յուլիս 23ին Ուրբոն գնդապետը զուխցերացի զին-
ուորներուն կարգաց Վախճ. Մէրի տէլ Վալ կարդի-
նալին մէկ նամակը, ուր Ն. Վախճութիւնը կը յայտ-
նէ Ս. Հօր ցաւը՝ տեղի ունեցած դէպքին առթիւ:
Եւ Զուխցերացեաց աւանդական հաւատարմութիւնը
յիշելէ յետոյ կ'ըսէ թէ անոնք իրենց բողոքը կրնային
և կրնան ընել օրինաւոր կերպով որուն որ անկ է: Նա-

մակը կը վերջանայ յայտարարելով թէ անոնք որ չեն
ուզեր այժմ գոյութիւն ունեցող հրահանգներուն հե-
տեւիլ, կրնան մեկնիլ:

Այս նամակը մեծ ազդեցութիւն քրտւ զինուոր-
ներուն վրայ և ամաքեց զանոնք:

Զորս հինգ հոգի արձակուրդ խնդրեցին և ընդու-
նեցան:

Ազգու և խոհեմ միջոցներ ձեռք առնուեցան
կարգապահութեան հաստատ ֆալուն համար:

ՀԱՅ ԿԱՅՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Յուլիս 30ին Եկեղեցւոյ Ս. Խորհուրդներով զօ-
րացած՝ կիքեց իր մասկանացու կեանքը Անարատ Եր-
զութեան Կուսանաց կարգէն Մայր Վաս վառւած Թո-
քաղեան:

Յուզարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ
Ս. Աստուածածին Աթոռանիստ Եկեղեցւոյ մէջ:

Յաւիտենական հանդիսա հանգուցեալին հոգւոյն,
և միթարութիւն Անարատ Երզութեան Կարգին:

Յուլիս 30ին Մուշէն Կոստանդնուպոլիս ե-
կաւ Գեր. Մեսրոպ Վ. Ուզունեան, մի քանի ամիս
օղափոխութիւն ընելու համար:

Է Զ Մ Ի Ա Մ Ն Ա Կ Ա Ն Հ Ա Յ Ե Ր

Յուլիս 29ին Էջմ. Հայոց Ազգ. Ժողովին դռնու-
ղան խմբակցութեանց ներկայացուցիչները Վալաթիդ
Խորհրդարանը նիստ գումարելով որոշեցին հրամարե-
լու հրահրել Արշարունի Պատրիարք:

Յաջորդ օրը այս որոշումը հաղորդուեցաւ Պատ-
րիարքին, որ յանձն տուաւ համակերպիլ:

Հաւանական է որ Պատրիարք ընտրուի Տէգրա-
նակերտի Տ. Զաւէն Եպիսկոպոսը:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Մ Ե Ր

Յուլիս 29ին Լաիրնէ ժամանեցին գահաժառանգ
իշխան Մուսուֆ Իլդէթ էֆ. և կայսեր որդին Զիւ-
էտտին էֆ. և խանդավառ ցոյցերով ընդունուեցան:

Նոյն օրը Լաիրնէի մէջ Մուսթաֆայի նախագահու-
թեամբ միմիկ մը գումարուեցաւ, որուն մասնակի-
ցեցան նաև ոչ-խլամ պեաներ և 20,000 չափ ժողո-
վուրդ:

ՄԼԿ Տէրութեանց Պոլսոյ դեսպանները դեռ
ո և է դիմում չըբին Բ. Դրան մօտ Լաիրնէի խորհրդին
առթիւ: Պատճառն այն է որ Լանտանի դեսպանաժո-
ղովը իր վերջին նիստին մէջ վճռական որոշում մը
չէ տուած: Բոլոր տէրութեանց ներկայացուցիչները
կործիք յայտնած են թէ ձեռնարկ մը անհրաժեշտ
է, բայց այդ ձեռնարկին ոչ ընտելութիւնը եւ ոչ ձեռ-
տակաւին վերջնական կերպով ճշգրտած չեն, նոր հրա-
հանգներու սպասելով: Հետեւապէս դեսպանաժողովը
իր առաջիկայ նիստին մէջ միայն պիտի կրնայ որոշում
մը տալ Բ. Դրան մօտ կատարուելիք դիմումին նկատ-
մամբ: Եւրոպական գահիճները այս մասին կը բա-
նակցին իրարու հետ և կը հաւաստուի թէ կը քննեն
մեծ տէրութեան մը առաջարկը Լաիրնէի համար
ուզղակի գործողութիւն մը կատարելու մասին:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Պաքէշի մէջ Յուլիս 30ին տեղի ունեցաւ հաշ-
տակեան պատուիրակներուն առաջին գումարումը:
Պալկարիոյ պատուիրակներն են Թոնչէֆ և Ռատէֆ
նախարարները: Ֆելէֆ, Բարրիքֆ, Նիսնէֆ և
Սթանիսթ զօրա լաւները: Յունաստանի պատուիրակ-
ներն են Մ. Վէլիցէլու և Մ. Բանաս Իսկ Սերպիոյ
պատուիրակներն են Մ. Մ. Բասիչ, Ռիւթիչ, Սերպոյ-
ժովիչ, Միլիթարիչ և Բալոֆալովիչ: Սեւ Լերան
պատուիրակներն են Մ. Մ. Վաքովիչ և Մարթինո-
ւիչ:

Կարոյ ի ազաւորը Օմ. Կայսրութեան նկատ-
մամբ ունեցած համակրութեան և անցեալին մէջ մա-
տուցած բարեկամական ծառայութեանց բերմամբ,
իւզպէս Խաղիոյ հետ հաշտութիւնը կնքուած միջո-
ցին, հեռագիր լը ուղղեց Սուլթանին ուշադրու-
լիւն հրահրելով այն յաւանաբութեանց վրայ, ու
լուս կրնայ երկարելի թուրքիա, ձեռնարկուած
լինուորական դրծողութեանց բերմամբ այն տեսակ
լաւր մը, որուն ճակատագիրը վճռականապէս որոշ-
ուած է Եւրոպայի կողմէ:

Լանտանի Դեսպանախորհուրդը վերջնականա-
պէս կարգադրեց Յուլիս 29ին Ալպանիոյ խնդիրը: Ալ-
պանիստ պիտի կատարուի ի խանի մը կողմէ:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Դեպքեր եւ սկզբունքներ	481
Եր. Տէր Կոմիսսա Նահասակին պատմական երկու գրութիւններ	484
Յիսուս Քրիստոս	486
Խմաստութեան սկզբանց վրայ յարոյական եւ պատմական խորհրդածութիւններ	489
Եօթնեակ Քրիստոնէի	491
Դարձ մը	492
Ղայիպ օլմուս մետերէքիտ	494
Տեղեկագրական	495

ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՅՈՎ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲ ԼԳՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանց Եւրոպայեցի. Քերտ, Պայամ փողոց ընդ 3, Կ. Եփա

ԲԱՃԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, տարեկան: 40 դիկ. արծ. վեցամսեայ: 20.—
մէկ թիւ 1 դիկ.:— Արաստահման՝ տար. թր. 10. վեցամս. 5.—Վնարմունք կանխիկ են:
ՀԱՍՑԷ.— Կարողիկէ Արձաշանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ.— 1.— Արձաշանգ կը նրաստահանի Շարաք օրերը: 2.— Խմբագրութիւնս պնտա-
տեալ չէ անպաշտօն կամ ֆոյնտեանք նրաստահանել իրեն ղրկուած ու եւ յօդուած: 3.— Կեղծանունով ղրկուած
յօդուածներու հետքնակը կը պարտի իր խկական անունը ծանուցանել Խմբագրութեան: 4.— Ձեռագիրներ եւ չեն
գարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուրքի մէկ կտոր միայն: 6.— Ծանուց-
մանց համար մասնաւոր պայմանագրութիւն կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրա-
ժեշտ երկու դանեկանի նամակադրով ի միասին ղրկել:

ՏՊԱՐԱՆ ԿԱՐՈՂԻԿԷ ԱՐՁԱՇԱՆԳԻ ԲԵՐԱ, 5 ՊԱՅՐԱՄ Փ. 5: Տպարանս ըստ ամենայնի նոյն եւ ի վիճակի է
որ եւ իցէ սպազբական գործոց համար: Կը սպուին ամէն տեսակ ծանուցումներ/ զիրեն, տեսներ, հրաւիրագիրներ,
խաղեր, քաղ-տնտեսք, մանագրներ, եւն., եւն.: Դիւներ անմիջեղի կերպով ածան են: Գեղեցկագիտական, նա-
ւակի եւ սպազբական մատենութեան կողմանէ յանախորդներ անտարակոյս զոն պիտի մնան:

ԿԸ ԾԱՆՈՒԻ «Տարական Ողբունք Բիւստանեական Վարդապետութեան» հատատեալ եկեղեցական իւրա-
նութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Դիւն, ամուր թղթակազմը 2 դիկն.:
